

ՆԵԼԼԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՆՊՄՄ

Հայ գրականության ամբիոնի հայցորդ

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱԿՆԻ ՀՈՒՇԵՐԸ ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԻ ՄԱՍԻՆ

1887-ին Ռափայել Պատկանյանը հուշեր է գրել Մոսկվայի Լազարյան ճեմարանում ուսանելու տարիների իր ուսուցչի՝ պրոֆեսոր Մկրտիչ Էմինի մասին¹: Ռափայել Պատկանյանն այդ հուշերը գրել է, երբ արդեն հիսուկոյթ տարեկան էր: Այս հուշերում նա տարիների հետվից իր գնահատականն է տալիս մանկավարժ, գիտնական ու ազգային գործիչ Մ. Էմինին՝ իր հուշերը խորագրելով՝ «Մանկական հիշողություններ պր. Մ. Էմինի մասին»: Հուշերի խորագրի տակ կա հղում՝ «Նվեր բարեկամական Գևորգ Քանանյանին»:

Ռափայել Պատկանյանն իր հուշերն սկսում է 1886-ին Մկրտիչ Էմինի 50-ամյա գիտական և մանկավարժական գործունեության և ծննդյան 70-ամյակին նվիրված հոբելյանի հիշատակումով, որն, անշուշտ, նորովի կարևորեց մեծ հայագետի դերը հայագիտության և գիտնականների մի ողջ սերունդ պատրաստելու գործում: Ինչպես գրում է Պատկանյանը. «Այդ հանդիսության ժամանակ նրա գործունեության, մարդկային հատկանիշների, գիտական նվաճումների մասին խոսեցին այնպիսի մարդիկ, որոնք զանազան ազգերու մտավոր հառաջադիմության մի-մի պարագլուխ են ճանաչված»: Ռափայել Պատկանյանը համեստորեն խոստովանում է, թե այդպիսի մարդկանց գնահատականներից հետո, իհարկե, իր հուշերը «ծաղրաշարժ են», բայց և այնպես ինքը ցանկանում է Մկրտիչ Էմինին տրված գնահատականների գանձարանում իր լուսնն ձգել, թեպետ «առաջվանն ասում եմ, որ այս իմ կատարածը Մկրտիչ Էմինի գլուխը զարդարող դափնյա պսակը մի տերևիկով անգամ չի ճոխացնի»²:

Ռափայել Պատկանյանն իր հուշերի սկզբում հիշում է հորը՝ Գաբրիել Պատկանյանին, ով շուրջ 30 տարի իր ուժերի ներածին չափով առաջ է մղել Նոր Նախիջևանի մտավոր կյանքը. «Մի տեսակ բարոյական արեգակ էր, որ յուր շուրջը սփռում էր լույս և ճշմարտություն»³: Հայրն արդեն իրեն ոգևորել էր, թե Մոսկվա գնալու դեպքում նա ունենալու է այնպիսի հռչակավոր ուսուցիչ, ինչպիսին Մկրտիչ Էմինն էր: Եվ գրողը իր երախտագիտությունն է հայտնում հորը, որն իրեն մղել է խոնարհվել նման մեծությունների առջև, որովհե-

¹ Տե՛ս Մկրտիչ Էմինի երկասիրությունները հայոց լեզվի, գրականության և պարմության մասին (1840-1855 թթ.), հայկարանի մի պատկերով և կենսագրական կյութերով, Մոսկվա, 1898, էջ 201-212: Այս հուշերի մասին հիշատակումներ կան Մ. Սաղյանի «Ռափայել Պատկանյան, կյանքը և գործը» մենագրության մեջ (զրն՝ Երևան, 1980), ինչպես նաև Սյր. Թովչյանի «Ռափայել Պատկանյան» առաջարան-հարվածում (զրն՝ Ռափայել Պատկանյան, Երևան, Երևան, 1980, էջ 4):

² Մկրտիչ Էմինի երկասիրությունները..., էջ 202:

³ Նույն տեղում:

տև «այս օրս մեր հայ պատանեկության և երիտասարդության սրտերեն բոլորովին անհետացած է այդ»⁴:

Ռափայել Պատկանյանը թվարկում է հայ և օտար այն գրողների անունները, որոնք նրա մանկության ու պատանեկության օրերի գրական ուղեկիցներն էին՝ Եղիշեն, Մովսես խորենացին, Փավստոս Բուզանդը, Ղազար Փարպեցին, Լեոնոստովը, Տուրգենևը, Գոգոլը, Ժան-ժակ Ռուսոն, Բեռնանդին դը-Սեն-Պիեռը, Մոլիերը, Ծեքսպիրը, Օիլլերը և մի շարք հեղինակներ, որոնց գաղափարներով ներշնչված է նա մտել Մոսկվայի Լազարյան ճեմարան, ուր սովորել է 1843-1849 թթ.:

Ռափայել Պատկանյանը հիշեցնում է, որ ինքը չի գրելու իր ուսուցչի վարքը⁵, որովհետև ինքը չունի հմտություն՝ մանրամասնելու Էմիլի կյանքի պատմությունը:

Պատկանյանը խոսում է իր ուսուցչի մանկավարժական հմտությունների մասին: Էմիլը դասարան մտնում էր հինգ թույն առաջ և դուրս էր գալիս հինգ թույն ուշ, սակայն իրենք բոլորովին չէին ձանձրանում դասերի երկարատևությունից և ոչ էլ հոգնում էին նրա պատմածները լսելուց: Էմիլը ուներ մի մանկավարժական գաղտնիք, որը միայն իրեն էր հայտնի, որով նա շատ հետաքրքիր էր դարձնում իր դասը: Մանկավարժության մեջ ընդունված է, որ դասը բաժանվում է երկու հավասար կեսի, առաջին կեսը հին դասի հարցում, երկրորդը՝ նոր դասի մատուցում: Էմիլի մոտ դասն այդպես չէր անցնում: Նա աշակերտների հարցմանը տրամադրում էր հազիվ 1/4 ժամ, իսկ մնացած մասն ինքն էր բացատրում հազար ու մի օրինակներով, նուրբ մանրամասներով, մեկնություններով: Այդ պատմությունները աշակերտները միանգամից «կուլ էին տալիս»: Դրանք շարժում էին սովորողի երևակայությունը և օրերով ու շաբաթներով քննարկման առարկա դառնում: Պատկանյանը հիշում է, թե ինչպես էր Էմիլը բացատրում Աստվածաշունչը, չորս Ավետարանները: Ամոռոանալի է նրա համար ողջ ուսման ընթացքը, հատկապես գրաբարի ուսուցումը: Հինգերորդ և վեցերորդ դասարաններում այնքան էր հմտացել գրաբարի մեջ, որ առանց բառարանների կարող էր Եղիշեն, խորենացի, Փավստոս, Հոմերոսի «Իլիականը», Միլտոնի «Դրախտ կորուսյալը» և ուրիշ հեղինակների ընտիր թարգմանությունները: Նա չի մոռանում, թե ինչպես իրենց ուսուցիչը առաջին անգամ կարդաց Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» և նրա մյուս գեղեցիկ քերթվածները՝ դրանով իր աշակերտների մեջ սեր առաջացնելով դեպի ժողովրդական բանաստեղծությունը:

Ռ. Պատկանյանի կարծիքով՝ այն վեց տարիները, որոնք իրենց համար երանելի էին, գուցե նաև իրենց ուսուցչի մանկավարժական գործունեության համար եղել են ամենագեղեցիկ ժամանակամիջոցը, որովհետև «Չեմ կարող ասել, որ պր. Էմիլի այն միջոցի աշակերտքս մեր Մայր Հայաստանի համար չհաշվարհիկ էակներ հանդիսացանք, ո՛չ, բայց

⁴ Նույն փնդում, էջ 203:

⁵ Նույնագրության այս հատվածը հիշեցնում է Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի հեկնյալ մասը. «Զասրանագևան Ազգին և զՆայասրան աշխարհին գաստուածապարզև գրոյն, իթ, կր և յորում ժամանակի մարակարարևցա և որպիսի արամբ այնպիսի նորոգպարտր աստուածնդն շնորհս նրեևցա և վասն նորին յուսարտ վարդապետութևան և հրեշտակարար կրօնիցն առաքիւնութևան զմբաւ ամնլով յիշարակարանս առանձին մարևնևւնան ծաղկեցուցանել և մինջ դևս անդէն ի խորհրդանցի մբացս վասն յուշ արկանկոյ միայնագործ հոգայի...» (փն՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1981, էջ 70):

և առանց մի հիմնավոր պատճառի չէր վատաբանում ո՛չ հայ վարժապետներին, ո՛չ հայ քահանաներին և վարդապետներին»¹⁰: Ըմբիըն իր աշակերտների մեջ ներարկել է մի կարևոր հատկություն. հարգել ու պատվել ամեն ինչ, որ իր վրա կրում էր հայի ու հայության անունը: Դրանք էին՝ *հայ լեզու, հայ գրականություն, հայ մատենագիր, Էջմիածնա Աթոռ, Վեհափառ Կաթողիկոս, Մխիթարյան Ուխտ*¹¹:

Ազգային նվիրումի կողքին, սակայն, Ըմբիըն երբեք ու երբեք չի ցուցաբերել օտարատեցության թեթև նշույլ անգամ: Ընդհակառակը, նա սիրով ծանոթացնում էր իր աշակերտներին օտարազգի նշանավոր գրողների երկերին՝ նրանց մեջ գրական բարձր ճաշակ ձևավորելու համար. «Եվ այդ իսկ էր պատճառը, որ պր. Ըմբիի աշակերտների մեջ բավականին շատ թվով բանաստեղծական ոգով և ճաշակով երիտասարդներ երևան եկան, ինչպես Ասկարյանը, Փափազյանը, Միրիմանյանը («Հայոց աղջիկներ՝ ձեր հոգուն մատաղ»), Դոդոխյանը («Միծեռնակ»), Ծախազիզյանը և ուրիշներ»: Ռ. Պատկանյանը խոսում է իր ուսուցչի մեկ ուրիշ հազվագյուտ հատկանիշի մասին: Երբ վերջինս աշակերտների համար կարդում էր Փավստոս, Խորենացի, Փարպեցի և մեր մյուս մատենագիրներին, ունկնդիրները մոռանում էին, թե գրքից կարդացվող հատվածների դեպքերը կատարվել են վաղնջական ժամանակներում: Հազար տարի առաջ ապրած նախնիները երևում էին որպես իրենց արյունակից հարազատներ. «Կարճ՝ պր. Ըմբիըն դարձնում էր մամոռտած, փոշիոտած հայոց պատմությունը մեր հայրերից մեզ թողած հիշատակ և մեզ ինքներուս՝ հարազատ ժառանգորդ Հայաստանին...: Հուսամ, որ պատմաբանի և մանավանդ ազգային պատմաբանի հանճարը երբեք չէ կարող դորանից վեր սավառնել, և Ըմբին ուներ այդ արգասավոր հանճարը»¹²:

Աշակերտները, տեսնելով հայոց մատենագիրների երկերում առօրյա կյանքի և կենցաղի նկարագրությունների պակասը, իրենց ուսուցչից ուզում էին իմանալ, թե արդյոք հայոց նախնիներն ունեցե՞լ են տոնախմբություններ, Հոմերոսի, Օրփեոսի նման երգիչներ, նվագարաններ: Ուսուցիչն անպատասխան չէր թողնում այդ հարցումները, բայց զուցե հենց այդ հարցումներն էլ նրան մղեցին դեպի «Վեպքի խորհուրդը, որով քանի մի տարի հետո նորա անունը հռչակվեցավ Եվրոպայի գիտնականաց կաճառումն»¹³:

¹⁰ «Փյալի-ազգասեր» արքահայրությունն առկա է Ռափայել Պարկանյանի «Հայ և հայություն» բանաստեղծության մեջ.

Ռ՛վ է հայր. մի՞թե նա է, որ խոսում է հայ լեզվով,
Եվ կամ որի մականունը հանգում է *յան* մասնիկով,
Որ ուրում է ամենայն օր ճաշին *տոլմա ու փլավ*,
Կամ պարծանք միշտ հագնում է հայի գղակ ու հալավ:

(Տե՛ս Ռ. Պարկանյան, Երկեր, էջ 37):

¹¹ Մկրտիչ Էմինի Երկասիրությունները..., էջ 209-210:

¹² Նույն տեղում, էջ 210:

¹³ Նույն տեղում, էջ 211: Խոսքը Էմինի «Վեպք հնոյն Հայաստանի» աշխատության մասին է, որ գրաբարով լույս տեսավ Մոսկվայում, 1850-ին, սրան հետևեց ռուսերեն լեզվով լույս տեսած մի նոր աշխատություն՝ «Моисей Хорезмский и древний эпос армянский, исследование Н. Эмина, написанное по случаю V Археологического съезда в Тифлисе, Москва, 1881: Մ. Էմինի այս գիրքը ռուսերենից հայերեն է թարգմանել խաչատուր Հովհաննիսյանը (տե՛ս Մ. Էմին, Մովսես Խորենացի և Հին հայկական վեպ», Թիֆլիզ, 1877): Այս երկու գրքերն էլ վերստին

